ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 29-31-ը Ֆրանսիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անուն ազգանունը**

   Գեորգի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**

   ՀՀ ԿԵ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. **Գործուղման վայրը / ժամկետները**

   Ֆրանսիայի Հանրապետություն, քաղաք Փարիզ, 2019 թվականի մայիսի 29-31

4. **Հրավիրող կողմը**

   Կենդանիների առողջության համաշխարհային կազմակերպություն (ԿԱՀԿ)

5. **Գործուղման նպատակը**

   Մասնակցել եմ 2019 թվականի մայիսի 29-31-ը Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզում կազմակերպվող ԿԱՀԿ պատվիրակների 87-րդ ամենամյա գլխավոր նստաշրջանին, նստաշրջանի շրջանակներում ցամաքային և ջրային կենդանիների առողջության համատեքստում՝ հիվանդությունների կանխարգելման և պայքարի միասնական մոտեցումների, հակաբիոտիկների դիմադրողականության, գյուղատնտեսական կենդանիների համարակալման, Հայաստանի Հանրապետությունից կենդանի կենդանիների և կենդանական և բուսական ծագման մթերքների, կերերի արտահանման և ներմուծման, տարանցիկ փոխադրման, անասնաբուժական պահանջների, ուղեկցող փաստաթղթերի, լաբորատոր կարողությունների հզորացման և անասնաբուժության ոլորտին առնչվող այլ հարցերի քննարկման նպատակով:

6. **Քննարկված թեմաները**

   Քննարկվել են երկկողմ համագործակցության՝ մասնավորապես ցամաքային և ջրային կենդանիների առողջության համատեքստում՝ հիվանդությունների կանխարգելման և պայքարի միասնական մոտեցումների, գյուղատնտեսական կենդանիների համարակալման, հակաբիոտիկների դիմադրողականության, անասնաբուժական ենթահսկման բեռների ներմուծման ու արտահանման, տարանցիկ փոխադրման, անասնաբուժական պահանջների, ուղեկցող փաստաթղթերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում անասնաբուժության ոլորտում լաբորատոր կարողությունների հզորացման, անասնաբուժական ծառայությունների վրա ներքին գործոնների ազդեցության (կլիմայի փոփոխություններ, հակամարտություններ, սոցիալ-տնտեսական գործոններ և այլն) և դրանց ադապտացման, սահմանային վերահսկողության արդյունավետության բարձրացման գործում միջազգային համագործակցությանն առնչվող հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նստաշրջանի ընթացքում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ՝ մասնավորապես Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի, ԵԱՏՄ անդամ պետությունների լիազոր մարմինների ներկայացուցիչների, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության, Ուրուգվայի Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների պատվիրակների, Իրանի Իսլամական Հանրապետության, ԱՄՆ-ի, ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՊԳԿ)՝ EuFMD ծրագրի, ՊԳԿ-ի և ԿԱՀԿ-ի՝ GF-TADs ծրագրի, Ավստրալիայի, Եվրամիության ներկայացուցիչների հետ քննարկվել են անասնաբուժության ոլորտին առնչվող մի շարք հիմնահարցեր, որոնցից կարելի է առանձնացնել՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքում անասնաբուժական ենթահսկման ապրանքների հետագծելիության, միասնական ձևաչափից տարբերվող անասնաբուժական սերտիֆիկատներին վերաբերող հարցերը, Եվրոպական մի շարք երկրներում կենդանիների որոշ հիվանդությունների նկատմամբ այլևս պատվաստումներ չիրականացնելը, գյուղատնտեսական կենդանիների համարակալման, անասնաբուժական ենթահսկման բեռների ներմուծման ու արտահանման, տարանցիկ փոխադրման ժամանակ ի հայտ եկող խնդիրները:

8.Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

ԿԱՀԿ Եվրոպայի գրասենյակի ղեկավարի հետ քննարկվել է Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կենդանիների համարակալման, անասնաբուժական ոլորտի ռազմավարական պլանի և ԿԱՀԿ հարթակում Հայաստանի Հանրապետության դերի բարձրացման վերաբերյալ հարցերը: Ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ վերջինս կաջակցի Հայաստանի Հանրապետությունում նշված հարցերի իրականացման գործընթացներին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Առաջարկվել է ԿԱՀԿ միազգային փորձագետների աջակցությամբ Հայաստանի Հանրապետության անասնաբուժության ոլորտում առկա բացերը հայտնաբերելու ուղղությամբ իրականացնել GAP վերլուծություններ:

Եվրասիական տնտեսական միության երկրների, Իրանի Իսլամական Հանրապետության, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, ԱՄՆ-ի, Եվրամիության երկրների և Հայաստանի Հանրապետության միջև բարելավել սերտ համագործակցությունը անասնաբուժական ենթահսկման բեռների ներմուծման ու արտահանման, տարանցիկ փոխադրման, անասնաբուժական պահանջների, ինչպես նաև ուղեկցող փաստաթղթերի հետ կապված գործընթացներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

05 հունիս 2019թ.